ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.02.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/14

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Սարգսյանի (լիազորագիր՝ տրված 27.01.2021թ.),

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Կ.Դրամբյանի (լիազորագիր՝ տրված 27.01.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/516-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 13.01.2021թ. թիվ 08-32 գրության հիման վրա 19.01.2021թ. թիվ 26/26-1/516-2021 գրությամբ նախաձեռնել է «Մեգիէլ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.01.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«1. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20 պայմանագրի մասով.

20.02.2020թ կնքված պայմանագրի 28 չափաբաժնով մատակարարվող ապրանքի վերաբերյալ պատվեր ենք ներկայացրել Covidien ընկերությանը, որն ի պատասխան հայտնել է ապրանքի անհասանելիության մասին շաբաթներ շարունակ (կից ներկայացվում է ապացույցը՝5 էջ): Այնուհետեւ պատվերի մասին 04.11.2020թ կրկին հիշեցում ենք ուղարկում արտադրող ընկերությանը եւ իրազեկում, որ ապրանքը մեր կողմից պատվիրատուին պետք է մատակարարվի մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ: Հարցմանն ի պատասխան Covidien ընկերությունը հայտնել է, որ պատվերը ներկայացնենք դիստրիբյուտորներից որեւէ մեկին: Որից հետո պատվեր ենք ներկայացրել Պրոֆտեստ ընկերությանը, կից գրությունը ներկայացվում է: Պրոֆտեստ ընկերությունը պատվերն ընդունել է, սակայն այն հասանելի է դարձել Հայաստանում 25.01.2021 թվականին:

Նույն պայմանագրի 65 չափաբաժնով իրականացրել ենք մատակարարում 29.12.2020թ ժամը 15:37-ին, կից ներկայացվում է հարկային հաշվի պատճեն (1 էջ) , սակայն բժշկական կենտրոնը չի ընդունել՝ պատճառաբանելով, որ պայամանագիրը միակողմանի լուծել է: Մատակարաման ժամանակ միակողմանի լուծման մասին հայտարարությունը դեռ գոյություն չի ունեցել: Այն կայքում հրապարակվել է 29.12.2020թ ժամը 18:12-ին: Այսինքն բժշկական կենտրոնի գործողություններում դիտավորություն ենք արձանագրում, որ արհեստական հիմքեր ստեղծի սույն գործընթացը նախաձեռնելու համար: Ուշագրավ է, որ 29.12.2020թ դեռեւս պայմանագրի կատարման ժամկետը ավարտված չի եղել:

2. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5 պայմանագրի մասով.

06.03.2020թ կնքված պայմանագրով մատակարարվող ապրանքի մոդելը արտադրող ընկերությունը այլեւս չի արտադրել և այն փոխարինելու առաջարկ ենք ներկայացրել բժշկական կենտրոնին, ում համար ընդունելի է եղել այդ նոր մոդելը, հավաստումը ստացել ենք 06.08.2020թ: Բժշկական կենտրոնի հետ համաձայնություն ունենալուց հետո նոր մոդելի մատակարարման պատվեր ենք ներկայացրել արտադրող ընկերությանը, որից հետո ապրանքը հանձնվել է փոխադրող կազմակերպությանը եւ փոխադրումն իրականացվել է 09.12.2020 թվականից, սակայն ծանրաբեռնվածությունից ելնելով

Հայաստան է հասել սույն թվականի հունվարի 08-ին (կից ներկայացվում է ապացույցը՝4 էջ):

3. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2 պայմանագրի մասով.

22.04.2020թ կնքված պայմանագրով պարտավորվել ենք մատակարարել 10 հատ կաթեթր բալոն ատրիո սեպտոստոմիկ, որից մատակարավել է 5 հատ: Այնուհետև մյուս 5 ներմուծվել է Հայաստանի Հանրապետություն, սակայն չի մատակարարվել և մատակարաված ապրանքն էլ հետ ենք պահանջել, քանի որ արտադրող ընկերությունը հետ է կանչել իր արտադրանքը այն բոլոր երկրներից որտեղ մատակարավել է, քանի որ եղել է արտադրական խոտան: Ստեղված իրավիճակի մասին բնականաբար իրազեկել ենք բժշկական կենտրոնին 02.11.2020 թվականի գրությամբ, որին կից ներկայացվել է Medtronic ֆիրմայի կողմից տրամադրված գրությունը և հետ կանչի հիմնավորումները:

Ըստ էության ընկերությունը կատարել է պայմանագրային պարտավորությունը, իսկ չկատարման մասով եղել են անհաղթահարելի ուժի առկայություն:

Մատակարարվող ապրանքից 5 հատի մատակարարման հանգամանքը վկայում ենք 07.09.2020թ դուրս գրված 5167715739 հարկային հաշվով, որը հետ է վերադարձվել 30.11.2020թ 6901205470 հաշիվ վավերագրով:

Կից ներկայացվում են հարկային հաշիվների եւ բժշկական կենտրոնի հետ, ինչպես նաեւ Medtronic ընկերության միջեւ գրագրությունների օրինակները (6 էջ):

4. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4 պայամանագրի մասով.

20.08.2020թ կնքված պայմանագիրը չի մատակարարվել մասնակի: Չմատակարաման պատճառ է հանդիսացել աշխարհում հայտարարված պանդեմիան: Աշխարհում, կապված համաճարակի հետ, արտադրվող ապրանքի մեծ պահանջարկի պայմաններում արտադրող ընկերությունը չի հասցրել ապահովել բոլոր պատվերները սահմանված ժամկետներում, որի մասին բանավոր հայտնել ենք նաեւ բժշկական կենտրոնին:

Նշված պայամանգրով մատակարավող ապրանքի արտադրող Teleflex ընկերությունը եւս հստակ չի կարողացել նշել ժամկետ, թե երբ կարող է ապահովել մեր պատվերները: Որպես հավաստում կից ներկայացնում ենք 09.11.2020թ էլեկտրոնային հաղորդագրության պատճեն (1 էջ):

Ըստ էության նշված պայմանագրերով մատակարարումը ժամկետում չկատարելը կապված չի եղել ընկերությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու եւ (կամ) անպատշաճ կատարելու համար

պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն մեղքի բացակայության պայմաններում:

Վերը ներկայացված հիմնավորումներով փաստում ենք, որ պարտավորության մասնակի չկատարման համար բացակայում է պարտապանի մեղքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 432-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որեւէ մեկը պատասխանատու չէ: Այդ դեպքում պարտատերն իրավունք չունի պարտապանից պահանջել պարտավորության կատարում:

Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է մերժել «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգը:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/14 ընթացակարգի շրջանակներում 27.01.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

Այնուհետև՝ 28.01.2021թ., Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՍՑ-ՆԳ-2021/14 ընթացակարգի 27.01.2021թ նիստում քննարկմանը հայտնեցինք, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5 պայմանագրով մատակարարվող ապրանքը Հայաստանի Հանրապետությունում է եղել 2021 թվականին, որը մաքսազերծվել էր 08.01.2021

թվականին: Սույն գրությանը կից ներկայացնում ենք գրավոր հավաստում, որ ապրանքը Հայաստանի Հանրապետությունում է գտնվել 02.01.2021թ:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2 պայմանագրի կատարման անհնարինության մասին ներկայացնում ենք եւս մեկ ապացույց, որ Medtronic ընկերությունը պահանջվող ապրանքը չի կարող մատակարարել եւ 25.11.2020թ էլեկտրոնային նամակով հայտնում է, որ Rashkind տեսակի ատրիոսեպտոստոմիկ բալոն կաթետերին փոխարինող ապրանք չունի եւ այլընտրանքային ապրանք եւս չի կարող առաջարկել:

27.01.2021 թվականին կրկին էլեկտրոնային նամակ է ներկայացվել Medtronic ընկերությանը ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2 պայմանագրի 6-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի արտադրության վերաբերյալ, սակայն մինչ օրս տեղեկություն չի տրվել:

Հավելենք, որ «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը հանդիսանում է Medtronic ընկերության ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում և ապրանքների մատակարաման առաջնայնություն բնականաբար կտրվի իր ներկայացուցչին, քանի որ դրանով ապահովում է իր արտադրանքի սպառման քանակը: Հետևաբար ապրանքների առկայության դեպքում դրանք հասանելի կլիներին «Մեգիէլ» ընկերության համար:

Բացի այդ, «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը պատվերներն արտադրող ընկերություններին ներկայացնում է, ոչ թե այն ժամանակ, երբ պատվեր է տալիս պատվիրատուն, այլ այն ժամանակ, երբ ընկերությունը առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվում գնման ընթացակարգերում:

«Մեգիէլ» ՍՊ ընկերությունը պատվերներ ներկայացնելու հաճախականության և ձևաչափի վերաբերյալ ապացույցը ներկայացրել է 27.01.2021թ նիստում, որը կցված է եղել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20 պայմանագրի վերաբերյալ ապացույցների փաթեթին՝ 3-5-րդ էջեր»:

Այնուհետև՝ 02.02.2021թ., Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՍՑ-ՆԳ-2021/14 ընթացակարգում քննվող հարցի առնչությամբ 28.01.2021թ ներկայցվել էր լրացուցիչ ապացույցներ պայմանագրերի կատարման անհնարինության վերաբերյալ, այդ թվում՝ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2 (6-րդ չափաբաժին) պայմանագրի վերաբերյալ: Միևնույն ժամանակ հայտնել էինք, որ 27.01.2021թ կրկին էլեկտրոնային նամակ-հարցում է ներկայացվել Medtronic ընկերությանը Rashkind տեսակի ապրանքի արտադրության մասին:

Medtronic ընկերությունը 01 փետրվարի 2021 թվականին պատասխան նամակով հայտնում է, որ դեռևս չեն արտադրում Rashkind կաթետերներ, իսկ արտադրության մեջ պահելու կամ հանելու մասին կրկին որոշում չունեն, նաև խնդրել է առաջիկայում ևս չպլանավորել Rashkind տեսակի կաթետերի վաճառք:

Կից ներկայացվում է 27.01.2021թ և 01.02.2021թ էլեկտրոնային հաղորդագրությունների օրինակը»:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.01.2020թ. թիվ 08-32 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Մեգիէլ» ՍՊԸ-ին ներառելու նպատակով Ձեզ ենք տրամադրում հետևյալ տեղեկությունները.

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 20.02.2020թ կնքվել է թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20, 06.03.2020թ կնքվել է թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5, 22.04.2020թ կնքվել է թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2 և 20.08.2020թ կնքվել է թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4 պայմանագրերը, որոնցով «Մեգիէլ» ՍՊԸ-ն ստանձնել էր ըստ պատվերների համապատասխան ապրանքներ մատակարարելու պարտավորություններ (ցանկը ներկայացվում է ստորև):

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	ապրանքայի ն նշանը	Չափման միավորը	Միավորի գինը ՀՀ դրամով	Լուծվող քանակը	Ընդամենը գումարը ՀՀ դրամով	Պայմանագրի համարը
28	Էլեկտրոդ կոագուլյատորի բացասական մանկական	Valleylab Covidien	հատ	6 000	80	480 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20
65	Կանյուլա զարկերակային 10ֆր	Medtronic	հատ	115 000	5	575 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20
46	Պոմպ արյան	Medtronic	հատ	140 000	2	280 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5
6	Կաթետր բալոն ատրիոսեպտոստոմիկ	Մեդտրոնիկ	հատ	155 000	10	775 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2
6	Ֆիլտր բակտերիալ Հեպա	Teleflex	հատ	2 000	425	1 100 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4

2020թ. ընթացքում Ընկերությանը էլ. փոստով ներկայացվել են հետևյալ Պատվերները.

Պայմանագրի համարը	Ապրանքի անվանումը	Պատվերի ամսաթիվ	Պատվիրված քանակը	Մատակարարված քանակը	Մատակարարման ամսաթիվը
ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20	Էլեկտրոդ կոագուլյատորի բացասական մանկական	17.08.2020թ	20	-	-
		01.09.2020թ	20	-	-
		28.09.2020թ	80	-	-
		03.11.2020թ	80	-	-
ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20	Կանյուլա զարկերակային 10ֆր 96820-010	30.06.2020թ	5	-	-
		01.09.2020թ	1	-	-
		28.09.2020թ	5	-	-
		03.11.2020թ	5	-	-
ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5	Պոմպ արյան BP-50	30.06.2020թ	2	-	-
		01.09.2020թ	1	-	-
		28.09.2020թ	2	-	-
		03.11.2020թ	2	-	-
ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2	Կաթետր բալոն ատրիոսեպտոստոմիկ Ռաշկինդի	30.06.2020թ	5	-	-
		03.11.2020թ	5	-	-
ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4	Ֆիլտր Հեպա	28.09.2020թ	300	-	-
		03.11.2020թ	300	50	12.11.20թ
				125	21.12.20թ

28.12.2020թ դրությամբ Ընկերությունը նշված 175 հատ հեպա ֆիլտրերից բացի այլ մատակարարումներ նշված ապրանքներով չի իրականացրել, դրանով իսկ խախտելով Պայմանագրերով նախատեսված մատակարարման բոլոր պայմանները և ողջամտության ժամկետները: Արդյունքում 29.12.2020թ-ին վերոնշյալ պայմանագրերը բժշկական կենտրոնի կողմից միակողմանի մասնակի լուծվել են՝ նշված չմատակարարված ապրանքների մասով (Հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 29.12.2020թ.)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/14 ընթացակարգի շրջանակներում 27.01.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

Այնուհետև Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.02.2021թ. թիվ 08-73 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՍՑ-ՆԳ-2021/14 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 27.01.2021թ. «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) կողմից ներկայացված դիրքորոշման, հայտնում ենք հետևյալը.

Գնման պայմանագրերի համապատասխան կետերով սահմանված է.

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Ընկերության ներկայացրած փաստերն առ այն, որ ապրանքների ձեռքբերման ուղղությամբ տարվել են աշխատանքներ, կատարվել են հարցումներ արտադրողներին կամ նրանց դիստրիբյուտորներին, սակայն չի հաջողվել սահմանված ժամկետում ապահովել ապրանքի մատակարարումը, դեռ բավարար չեն համարելու, որ ընկերությունը կատարել է իր պայմանագրով ստանձնած պարտավորությունները, քանի-որ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված նման իրավիճակներ պայմանագրում նախատեսված չեն:

Հարկ ենք համարում նշել, որ ընկերությանը պատվերներ ներկայացվել են ոչ թէ մեկ, այլ մի քանի անգամներ: Ընդ որում Պատվիրատուն իրավունք ուներ պայմանագրերը լուծել առաջին իսկ պատվերի չկատարման հիմքով, սակայն դա չի արվել և Ընկերությանը տրամադրվել է առավելագույն հնարավորություն, ի վերջո ապրանքները մատակարարելու համար: Դա փաստում է այն, որ Պատվիրատուն չի ստեղծել արհեստական հիմքեր պայմանագրերը լուծելու համար, ինչպես նշում է Ընկերությունը, այլ ընդհակառակը դրսևորել է գործընկերային հարաբերությունների պահպանման առավելագույն ջանքեր:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20 պայմանագրի մասով Ընկերության այն պնդումը, որ 29.12.2020թ. Ընկերությունը մատակարարել է պայմանագրով նախատեսված ապրանքը (Կանյուլա զարկերակային 10ֆր) չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերությունը մատակարարել է միայն 1 հատ կանյուլա, այնինչ պահանջը եղել է 5 հատի: Պատվիրատուն կարող էր Ապրանքը չընդունել պայմանավորված Պայմանագրի 2.1.1 կետով, սակայն միայն դա չի հիմք հանդիսացել ապրանքը չընդունելու համար, քանի որ արդեն իսկ նախաձեռնված էր Պայմանագրի լուծման գործընթացը: Պայմանագրի լուծման գործընթացը չի սկսվում հայտարարության հրապարակումով, այլ դրան նախորդում են լուծման հիմքերի արձանագրման, փաստաթղթավորման, հայտարարության նախապատրաստման և հաստատման գործընթացները, որից հետո միայն տեղի է ունենում հայտարարության հրապարակումը և միաժամանակյա ծանուցումը Մասնակցին: 29.12.2020թ. ժամը 14:59 դրությամբ Պայմանագրերի միակողմանի լուծման հաստատված գրությունը ներկայացված է եղել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ՝ գնումների կայքում տեղադրելու համար, քանի որ Պատվիրատուն կայքում հրապարակումների տեղադրման լիազորություններ չունի և այդ գործառույթն իրականացվում է վերջինիս միջոցով: Ստորև ներկայացվում է քաղվածքը, որտեղ հստակ երևում է ծանուցման ժամը:



ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5 պայմանագրի մասով Ընկերության ներկայացված այն փաստը, որ Պատվիրատուին առաջարկվել է փոփոխված մոդելի ապրանք և Պատվիրատուն ընդունել է այդ առաջարկը, նույնպես հավաստում է այն, որ Պատվիրատուն չի առաջացրել որևէ արհեստական խոչընդոտ Պայմանագրի կատարման համար: Ուշագրավ է նաև այն, որ 09.12.2020թ-ին, ինչպես փաստել է Ընկերությունը, արդեն սկսվել էր ապրանքի բեռնափոխադրումը և ապրանքը հասել է Հայաստան 08.01.2021թ-ին: Այդ տեղեկությունը հստակ հասանելի էր Ընկերությանը, ուստի նա կարող էր ինչպես այս, այնպես էլ մյուս պայմանագրերի մասով սահմանված ժամկետներում դիմել Պատվիրատուին Պայմանագրերի կատարման ժամկետի երկարաձգման խնդրանքով՝ տրամադրելով բեռնափոխադրումների մասին և այլ անհրաժեշտ տեղեկություններ: Նման նախաձեռնությամբ Ընկերությունը հանդես չի եկել, դրանով իսկ չկատարելով պայմանագրերի կատարմանն ուղղված բոլոր հնարավոր և իրատեսական գործողությունները:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2 պայմանագրի մասով Ընկերությունը մատակարարել է 5 հատ Կաթետր բալոն ատրիոսեպտոստոմիկ, սակայն հետ է տարել դրանք արտադրական խոտանի պատճառով: Նման մատակարարումը չի կարող դիտվել որպես պայմանագրի կատարման փաստ, քանի որ խոտան հանդիսացող ապրանքը չի կարող մատակարարվել Պատվիրատուին որպես Պայմանագրի պայմաններին համապատասխանող ապրանք: Սույն դեպքում ապրանքի մատակարարումը և դրա վերադարձը մեկ աբողջության մեջ պետք է դիտել որպես չմատակարարված ապրանք: Միաժամանակ, արտադրողի կողմից

թույլ տրված արտադրական խոտանի հետևանքով ապրանքը չմատակարարելը նույնպես չի հանդիսանում անհաղթահարելի ուժի գործոն, առավել ևս այն դեպքում, երբ տվյալ ապրանքատեսակը դուրս չի եկել արտադրությունից, և խնդիրը վերաբերվել է միայն կոնկրետ խմբաքանակներին:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4 պայմանագրի մասով աշխարհում տիրող համաճարակի հետ կապված խնդիրները վկայակոչելը նույնպես դուրս է տրամաբանության շրջանակներից, քանի որ նշված գնման ընթացակարգին Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել 14.08.2020թ-ին, հաղթող է ճանաչվել նույն օրը և Պայմանագիրը կնքվել է 20.08.2020թ-ին: Ընթացակարգին ընկերության մասնակցության օրն արդեն իսկ հայտնի էին այն բոլոր համաշխարհային խնդիրները, որոնք պայմանավորված էին համաճարակով:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքին կատարված հղմանը, ապա Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից սկսած Կողմերն իրենց իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվությունը ստանձնում են Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան: Վերոգրյալ պայմանագրերի լուծման հետ կապված բոլոր դրույթները և խնդիրների կարգավորումները նախատեսված են Պայմանագրերով և դրանք պետք է դիտարկվեն Պայմանագրերի շրջանակներում:

Ելնելով վերը նշվածներից գտնում ենք, որ Մասնակցի փաստարկները չեն ազատում Ընկերությանը պայմանագրերով նախատեսված պատասխանատվությունից և դրանից բխող հետևանքներից»:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/14 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/14 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 06.03.2020թ. կնքվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5» ծածկագրով, 22.04.2020թ.՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2» ծածկագրով, 20.02.2020թ.՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20» ծածկագրով, 20.08.2020թ.՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրեր (հետայսու նաև՝ Պայմանագրեր), որոնց 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և

հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. 06.03.2020թ. կնքված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5» պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 22.04.2020թ. կնքվել է N 1, 22.04.2020թ.՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում՝ 03.06.2020թ. N 1, 20.02.2020թ.՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20» ծածկագրով պայմանագրի շրջանակներում՝ 22.04.2020թ. N 1 համաձայնագրերը:

3. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 29.12.2020թ. հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/516-2021 գրությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 13.01.2021թ. թիվ 08-32 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ի 27.01.2021թ., 28.01.2021թ. և 02.02.2021թ. գրություններով հայտնած դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես՝

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 06.03.2020թ. կնքվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ Պայմանագրի շրջանակներում ապրանքի մատակարարումն

իրականացվելու է 2020թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում՝ յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ¼-ից, եթե դրան համաձայն չէ վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը հանդիսանում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 22.04.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել կողմերի ստորագրման պահից:

2. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 22.04.2020թ. կնքվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ Պայմանագրի շրջանակներում ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2020թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում՝ յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ½ -ից, եթե դրան համաձայն չէ վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը հանդիսանում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 03.06.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել կողմերի ստորագրման պահից:

3. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 20.08.2020թ. կնքվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ Պայմանագրի շրջանակներում ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2020թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում՝ յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ½ -ից, եթե դրան համաձայն չէ վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 20.02.2020թ. կնքվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ Պայմանագրի շրջանակներում ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2020թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում՝ յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ¼ -ից, եթե դրան համաձայն չէ վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը հանդիսանում է ֆինանսական

միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 22.04.2020թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել կողմերի ստորագրման պահից:

«Մեգիէլ» ՍՊԸ-ին ուղղված 29.12.2020թ. թիվ 08/504 ծանուցմամբ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

«Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև կնքվել են հետևյալ պայմանագրերը.

-20.02.2020թ. կնքված թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20,

-06.03.2020թ. կնքված թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5,

-22.04.2020թ. կնքված թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2,

-20.08.2020թ. կնքված թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4:

Նշված պայմանագրերով Ձեր ընկերությունը ստանձնել էր մատակարարել համապատասխան ապրանքներ (ցանկը ներկայացվում է ստորև):

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Ապրանքային նշանը	Չափման միավորը	Միավորի գինը ՀՀ դրամով	Լուծվող քանակը	Ընդամենը գումարը ՀՀ դրամով	Պայմանագրի համարը
28	Էլեկտրոդ կոագուլյատորի բացասական մանկական	Valleylab Covidien	հատ	6000	80	480 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20
65	Կանյուլա զարկերակային 10 ֆր	Medtronic	հատ	115 000	5	575 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20
46	Պոմպ արյան	Medtronic	հատ	140 000	2	280 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5
6	Կաթետր բալոն ատրիոսեպտոստումիկ	Մեդտրոնիկ	հատ	155 000	10	775 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2
6	Ֆիլտր բակտերիալ հեպա	Teleflex	հատ	2 000	425	1 100 000	ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4

Համաձայն պայմանագրերի 2.1.7 կետերի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմամագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Հիմք ընդունելով այն, որ նշված ապրանքները մինչ այժմ չեն մատակարարվել, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, նշված Պայմանագրերի 2.1.7 և 8.11 կետերի պահանջների համաձայն «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանիորեն լուծում է վերոնշյալ պայմանագրերը ներկայացված ապրանքների մասով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Կատարողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծվելու մասին պատշաճ ծանուցված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

Միաժամանակ հայտնում ենք, որ Կատարողից կգանձվի պայմանագրերի կատարման և որակավորման ապահովումները համապատասխան ապրանքների մասով, ինչպես նաև պայմանագրերի 6.2 կետով նախատեսված տույժերը»:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում 29.12.2020թ. հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Այսպիսով՝ անդրադառնալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքներին՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

1. 06.03.2020թ. կնքված թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37-5» պայմանագրի մասով Ընկերությունը հայտնել է, որ նշված պայմանագրով մատակարարվող ապրանքի մոդելը արտադրող ընկերությունը այլևս չի արտադրել և այն փոխարինելու առաջարկ է ներկայացվել բժշկական կենտրոնին, ում համար ընդունելի է եղել այդ նոր մոդելը, հավաստումը ստացել են 06.08.2020թ: Բժշկական կենտրոնի հետ համաձայնություն ունենալուց հետո նոր մոդելի մատակարարման պատվեր են ներկայացրել արտադրող ընկերությանը, որից հետո ապրանքը հանձնվել է փոխադրող կազմակերպությանը և փոխադրումն իրականացվել է 09.12.2020 թվականից, սակայն, ծանրաբեռնվածությունից ելնելով, Հայաստան է հասել սույն թվականի հունվարի 08-ին:

Ի հավաստումն վերը շարադրվածի՝ Ընկերության կողմից ներկայացվել է իր և «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև իրականացված նամակագրությունը, համաձայն որի՝ Ընկերությունը 05.08.2020թ. հայտնել է, որ Մեդտրոնիկ ընկերությունը տեղեկացրել է, որ CBBP50-այլևս չի արտադրվում և որ դրա փոխարեն կարող են մատակարարել M999436A կոդի հավաքածուն՝ նույն գնով:

Ի պատասխան նշված էլ. նամակի՝ Պատվիրատուն 06.08.2020թ. հայտնել է, որ ներքոնշյալ ապրանքն ընդունելի է:

Ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացվել է RS MST Customer Care OPS Distributors support rs.mstcustomercareopsdistributorssupport@medtronic.com և Megiel LLC office@megiel.am էլ. փոստերի միջև իրականացված նամակագրությունը, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նոր մոդելի մատակարարման պատվեր են ներկայացրել արտադրող ընկերությանը, սակայն, ինչպես Ընկերությունն է նշել, ծանրաբեռնվածությունից ելնելով, որպիսի փաստը հիմնավորվում է Ընկերության կողմից ներկայացված ապրանքի ներմուծման հայտարարագրից, համաձայն որի՝ բեռը Կարգո բեռնային համալիր մուտք է եղել 02.01.2021թ., որից հետո՝ 11.01.2021թ., մաքսազերծվել է:

2. 22.04.2020թ. կնքված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/49-2» պայմանագրի մասով Ընկերությունը հայտնել է, որ նշված պայմանագրով պարտավորվել է մատակարարել 10 հատ կաթեթր բալոն ատրիո սեպտոստոմիկ, որից մատակարարվել է 5 հատ: Այնուհետև մյուս 5-ը ներմուծվել է Հայաստանի Հանրապետություն, սակայն չի մատակարարվել և մատակարարված ապրանքն էլ հետ է պահանջել, քանի որ արտադրող ընկերությունը հետ է կանչել իր արտադրանքը այն բոլոր երկրներից, որտեղ մատակարարել է, քանի որ եղել է արտադրական խոտան:

Ի հավաստումն վերը շարադրվածի՝ Ընկերության կողմից ներկայացվել է ապրանքների առաքման հաշիվ վավերագիր, համաձայն որի՝ թվով 5 «Կաթետր բալոն ատրիո սեպտոստոմիկ» ապրանքը ներմուծվել է ՀՀ դեռևս 07.09.2020թ. և ապրանքների առաքման հաշիվ վավերագիր, համաձայն որի՝ մյուս խմբաքանակը՝ թվով 5 «Կաթետր բալոն ատրիո սեպտոստոմիկ» ապրանքը, ներմուծվել է ՀՀ 31.11.2020թ., ինչպես նաև Medtronic ընկերության գրությունն առ այն, որ առաջացել է արտադրական խոտան և 31.08.2020թ. դրությամբ Medtronic ընկերության կողմից ստացված «Կաթետր բալոն ատրիո սեպտոստոմիկ» ապրանքի օգտագործումը առաջացրել է բազմաթիվ խնդիրներ, այդ թվում 1 հիվանդի մահ, ինչը հաշվի առնելով՝ ընկերությունը հետ է կանչում մատակարարված ապրանքը և դադարեցնում արտադրությունը:

Այնուհետև՝ 02.02.2021թ., ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ 27.01.2021թ կրկին էլեկտրոնային նամակ-հարցում է ներկայացվել Medtronic ընկերությանը՝ Rashkind տեսակի ապրանքի արտադրության մասին:

Medtronic ընկերությունը 01.02.2021թ. պատասխան նամակով հայտնել է, որ դեռևս չեն արտադրում Rashkind կաթետերներ, իսկ արտադրության մեջ պահելու կամ հանելու մասին կրկին որոշում չունեն, նաև խնդրել է առաջիկայում ևս չպլանավորել Rashkind տեսակի կաթետերի վաճառք: Ի հավաստումն նշվածի՝ Ընկերության կողմից ներկայացվել է nursultan.gabbassov@medtronic.com և office@megiel.am էլ. փոստերի միջոցով իրականացված նամակագրությունը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Խնդրում եմ տեղեկացնել, թե արդյոք rashkind կաթետերի արտադրություն եղել է 2020թ. նոյեմբերի հետ կանչի նամակից հետո»:

Ի պատասխան Ընկերության էլեկտրոնային նամակի՝ Medtronic ընկերությունն ուղարկել է էլեկտրոնային նամակ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ինչպես տեղեկացրել է մեր մարկետինգային թիմը, Rashkind կաթետերները արտադրության մեջ պահելու կամ արտադրությունից հանելու մասին որոշում չկա:

Այժմ մենք քննարկման փուլում ենք և մեզ կտեղեկացնեն, հենց որ որոշում կայացվի:

Այսպիսով, խնդրում եմ մի պլանավորեք Rashkind-ի վաճառք: Ես անմիջապես կտեղեկացնեմ, երբ ինչ-որ տեղեկություն ստանամ:

Հայցում ենք Ձեր ներողամտությունը ստեղծված անհարմար իրավիճակի համար»:

3. 20.08.2020թ. կնքված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/66-4» պայմանագրի մասով Ընկերությունը հայտնել է, որ չմատակարարման պատճառ է հանդիսացել աշխարհում հայտարարված պանդեմիան: Աշխարհում, կապված համաճարակի հետ, արտադրվող ապրանքի մեծ պահանջարկի պայմաններում արտադրող ընկերությունը չի հասցրել ապահովել բոլոր պատվերները սահմանված ժամկետներում: Նշված պայամանգրով մատակարավող ապրանքի արտադրող Teleflex ընկերությունը ևս հստակ չի կարողացել նշել ժամկետ, թե երբ կարող է ապահովել մեր պատվերները:

Ի հավաստումն վերոգրյալի՝ Ընկերության կողմից ներկայացվել է office@megiel.am էլ. փոստի միջոցով Stephen.Kelly@teleflex.com էլ. փոստին ուղղված էլեկտրոնային նամակն առ այն, որ Ընկերությունը խնդրել է հայտնել, թե երբ կկարողանան մատակարարել տվյալ ապրանքատեսակները:

4. 20.02.2020թ կնքված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21-20» պայմանագրի մասով Ընկերությունը հայտնել է, որ նշված պայմանագրի 28 չափաբաժնով մատակարարվող ապրանքի վերաբերյալ պատվեր է ներկայացրել Covidien ընկերությանը, որն ի պատասխան հայտնել է ապրանքի անհասանելիության մասին շաբաթներ շարունակ: Այնուհետև պատվերի մասին 04.11.2020թ կրկին հիշեցում է ուղարկվել արտադրող ընկերությանը և իրազեկել, որ ապրանքը պատվիրատուին պետք է մատակարարվի մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ: Հարցմանն ի պատասխան Covidien ընկերությունը հայտնել է, որ պատվերը ներկայացնեն դիստրիբյուտորներից որևէ մեկին: Որից հետո պատվեր է ներկայացվել Պրոֆտեստ ընկերությանը: Պրոֆտեստ ընկերությունը պատվերն ընդունել է, սակայն այն հասանելի է դարձել Հայաստանում 25.01.2021 թվականին:

Ի հավաստումն վերոգրյալի՝ Ընկերությունը ներկայացրել է office@megiel.am և andrey.yevdokimov@medtronic.com էլեկտրոնային փոստերի միջև իրականացված նամակագրությունն առ այն, որ Ընկերությանը 04.11.2020թ. առաջարկվել է դիմել իրենց գլխավոր դիստրիբյուտոր Պրոֆտեստ ընկերությանը:

Ինչպես նաև office@megiel.am և proftestLLC@gmail.com էլեկտրոնային փոստերի միջև իրականացված նամակագրությունն առ այն, որ Ընկերությունը 06.11.2020թ. դիմել է Պրոֆտեստ ընկերությանը և խնդրել ընդունել 80 հատ E7510-25 DB-POLYHESYVE II PED RET EL X25 ապրանքատեսակի պատվերը:

Նույն պայմանագրի 65 չափաբաժնի մասով Ընկերությունը հայտնել է, որ իրականացրել է մատակարարում 29.12.2020թ ժամը 15:37-ին, սակայն բժշկական կենտրոնը չի ընդունել՝ պատճառաբանելով, որ պայամանագիրը միակողմանի լուծել է:

Ի հավաստումն այն հանգամանքի, որ 65-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը մատակարարվել է, Ընկերության կողմից ներկայացվել է 29.12.2020թ. ապրանքի առաքման հաշիվ վավերագիր:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն ևս չի հերքել ապրանքը՝ Ընկերության կողմից 29.12.2020թ. մատակարարելու փաստը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, Ընկերության կողմից Պայմանագրերի կատարմանն ուղղված գործողությունները, դրանց վերաբերյալ ներկայացված փաստական տվյալները, այն է՝ տրամադրված ներմուծման հայտարարագրերը, ապրանքի առաքման հաշիվ վավերագրերը և նամակագրությունը՝ գտնում եմ, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն նման պայմաններում չէր կարող կանխատեսել և բացառել

վերը նշված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված գործողությունների ընթացքում վերը շարադրված խոչընդոտների առաջանալու հնարավորությունը և դրանցից բխող հետագա խնդիրները՝ կապված մատակարարման ժամկետների հետ, ուստի Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության կիրառմանը:

Վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում եմ, որ Ընկերությունն արդյունքում օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը կատարելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/516-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**